



## Ինչու են Քաղճառայության խորհուրդում բարձր պաշտոնների համար մրցույթները փակ անցկացվելու

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը նոյեմբերի 18-ին արգելել է դիտորդներին ներկա գտնվել գլխավոր և բարձրագույն պաշտոնների համար անցկացվող մրցույթներին: Խորհուրդը, մասնավորապես, խոչընդոտել է իրենց մրցույթները սեպտեմբերից մինչ այժմ դիտարկող

«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ի դիտորդների գործունեությունը: ՀԿ-ն դիմել է ՄԻՊ գրասենյակին, որի ներկայացուցչին ևս ներսում մերժել են՝ ասելով, որ խորհուրդը դիտորդությունն արգելելու մասին որոշում ունի:

ՀԿ-ի նախագահ Լուսինե Հակոբյանն Epress.am-ին հայտնել է, որ սա քաղճառայության մասին օրենքի խախտում է, որոնցով նախատեսվում է քաղճառայողների մրցույթներում հասարակական վերահսկողություն իրականացնելը:

«Հանրային միջոցներով վարձատրվող քաղաքացիական ծառայողների մրցույթներ են իրականացվում, եղ մրցույթներն էլ են իրականացնում հանրային միջոցներով, և այդ գործընթացի նկատմամբ հանրությունը զրկվում է տեղեկություն ստանալու հնարավորությունից: Սա արսուրդ է», - ասել է ՀԿ-ի համահիմնադիր Տիգրան Եգորյանը:

Դիտորդական առաքելության իրականացման ժամանակ էլ խորհուրդը խոչընդոտներ էր ստեղծում, պատմել է Տիգրան Եգորյանը: Նրա խոսքով՝ իրենց դիտորդներին արգելում էին ձայնագրել մրցույթի հարցազրույցի փուլը, ըստ էության, միակ փուլը, երբ դիմորդը պետք է խոսի և պատասխանի հանձնաժողովի հարցերին. մրցույթի մյուս փուլը գրավոր հարցերին պատասխանելն է:

Բացի դրանից, դիտորդներից մեկին արգելել են մրցույթին մասնակցել ուշանալու պատճառով, մինչդեռ ուշացումը խնդիր կարող է լինել մրցույթի մասնակցի կամ հանձնաժողովի անդամի համար և բացարձակապես կիրառելի չէ դիտորդի պարագայում:

Լուսինե Հակոբյանի խոսքով՝ Խորհրդի անդամ Գևորգյանը դիտորդին ասել է. «Եթե դու գնաս ուրիշի տուն, քեզ թույլ չտան մնաս, դու կմնա ս»:

Մեկ այլ դեպքում Խորհուրդը դիտորդներին բռնի ուժով հեռացնելու համար ոստիկանություն էր կանչել:

Իրավաբանների խոսքով՝ այս բոլոր խոչընդոտները վկայում են, որ դիտորդությունը հանձնաժողովի համար վտանգավոր է, քանի որ որոշ չափով դժվարացնում է ձևական մրցույթներ անցկացնելը: Ըստ դիտորդների՝ բարձր պաշտոնների մրցույթներում մեծ մասամբ մրցակցություն չի լինում, լինում է մեկ հավակնորդ, հանձնաժողովներում հաճախ չեն լինում անկախ գիտնականներ:

«Մեր ներկայությունը թույլ չի տալիս որոշ առումով ձևական մրցույթը անցկացնել: Հետաքրքիր փաստեր են արձանագրվում, օրինակ, երբ հավակնորդը գրավորից ստանում է բարձր միավոր, սակայն «կտրվում է» բանավոր հարցազրույցից, չնայած հանձնաժողովի հուշող հարցերին», - ասել է Լուսինե Հակոբյանը:

Աղբյուրը՝ <http://www.epress.am/2014/11/20/260066.html>